ՀՈԴՎԱԾՆԵՐ — СТАТЬИ

ՌՍԴԲԿ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը, մեր երկրի բոլոր ժողովուրդները և առաջավոր մարդկությունը այս տարվա հուլիսին լայնորեն նշեցին կոմունիստական կուսակցության II համագումարի 70-րդ տարեդարձը։

Այդ տարիների ընթացքում Վ. Ի. Լենինի ստեղծած կուսակցությունը անցել է դժվարին և հերոսական ճանապարհ։ Նա կարողացավ կազմակերպել Ռուսաստանի բանվոր դասակարգին և տանել հեղափոխական պայքարի՝ ցարիզմի ու կապիտալիզմի դեմ։ Նրա ղեկավարությամբ Ռուսաստանի պրոլետարիատը անցավ 1905—1907 թթ. և 1917 թ. փետրվարյան հեղափոխությունների բովով, հաղթանակով ավարտեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և ստեղծեց աշխարհում բանվորա-գյուղացիական առաջին պետությունը, սոցիալիզմի առաջին հայրենիքը։

Կանխատեսելով պայքարի այս ուղին, Վ. Ի. Լենինը կուսակցության ստեղծման շրջանում ասում էր. «Պատմությունն այժմ մեր առջև դրել է մերձավորագույն մի խնդիր, որ ամենահեղափոխականն է *որևէ այլ երկրի պրոլետարիատի բոլոր* մերձավորագույն *խնդիրներից։ Այդ խնդրի իրականացումը... ռուսական պրոլետարիատին կդարձներ միջազգային հեղափոխական պրոլետարիատի ավանգարդը»*[1]*։ Յոթ տասնյակ տարի պայքարելով հանուն սոցիալիստական հասարակարգի հաղթանակի, աշխարհի խոշորագույն երկիրը դուրս բերելով կոմունիստական շինարարության մայրուղին, հաղթանակ տանելով երկրորդ համաշխարհային պատերազմում և պատվար կանգնելով խաղաղության ու ժողովուրդների ապահովության դժվարին գործում, Սովետական Միությունը և նրա ղեկավար ուժը հանդիսացող կոմունիստական կուսակցությունը ամրապնդեցին իրենց ավանգարդային դերը։ Իրագործելով ՍՄԿԿ XXIV համագումարի խաղաղության ծրագիրը, մեր հայրենիքն ու կուսակցությունը ցույց տվեցին, որ դարձել են համաշխարհային զարգացման որոշիչ գործոններից մեկը։*

Կուսակցության հեղինակության բարձրացմանը զուգընթաց տեղի ունեցավ նաև նրա շարքերի աճը։ ԵԲԿ 1903 թ. սոցիալ-դեմոկրատների թիվը եղել է մոտ երեք հազար հինգ հարյուր, հոկտեմբերյան հեղափոխության շրջանում այն ավելացել է հարյուր անգամ, իսկ մեր օրերում կուսակցության անդամների թիվը մոտենում է 15 միլիոնի։ Ոչ միայն սոցիալիզմի երկրներում, այլև ամբողջ աշխարհում ժամանակակից առաջընթացի բնորոշ կողմը հանդիսանում է կոմունիստական ու բանվորական կուսակցությունների դերի հարատև աճը և նրանց ղեկավարության անհրաժեշտությունը։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, IV հրատ., հատ. 5, էջ 492։

ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը, նշելով կոմունիստական կուսակցության ձեռք բերած ակնառու հաջողությունները ներքին և արտաքին քաղաքականության ասպարեզներում, II համագումարի 70-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի իր բացման ճառում ասաց. «... Մենք չենք մոռանում և երբեք չենք մոռանա, որ այն ուղու սկիզբը, որը հասցրեց այսօր մեր նվաճած գագաթներին, ՌՍԴԲԿ II համագումարն էր, մեր կուսակցության նրա ընդունած առաջին ծրագիրը»[2]։ Այդ համագումարի համաշխարհային պատմական նշանակությունը կայանում է նրանում, որ այնտեղ ավարտվեց հեղափոխական մարքսիստական կազմակերպությունների միավորման պրոցեսը և կազմավորվեց Ռուսաստանի բանվոր դասակարգի կուսակցությունը՝ Վ. Ի. Լենինի մշակած գաղափարա-քաղաքական ու կազմակերպական սկզբունքների հիման վրա[3]։ Մինչ այդ կատարված փորձերը՝ համախմբելու սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, ներառյալ նաև ՌՍԴԲԿ I համագումարը, որ տեղի ունեցավ 1898 թ. Մինսկում, հաջողությամբ չպսակվեցին։ Վ. Ի. Լենինը և նրա զինակիցները հնարավորություն չունեցան մասնակցելու դրանց աշխատանքներին։ Մյուս կողմից, բանվորական շարժման մեջ ղեկավարությունը անցավ «էկոնոմիստների» ու «լեգալ մարքսիստների» ձեռքը, իսկ սրանք ի վիճակի չէին ստեղծելու բանվոր դասակարգի հեղափոխական կուսակցություն։ «Լենինը ռուսական և միջազգային բանվորական շարժման մեջ առաջինն էր, որ հասկացավ և գիտականորեն ապացուցեց, որ իմպերիալիզմի պայմաններում բանվոր դասակարգին հարկավոր է կուսակցության նոր տիպ, որը արմատապես տարբերվի II ինտերնացիոնալի կուսակցություններից, հարկավոր է սոցիալիստական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի կուսակցություն»[4]։

Այդ նպատակին հասնելու համար Վ. Ի. Լենինը «Իսկրա» թերթի օգնությամբ վճռական պայքար մղեց տարբեր երանգի օպորտունիստների դեմ, համախմբեց մարքսիստական կազմակերպությունները և նախապատրաստեց II համագումարի հրավիրումը։ Վ. Ի. Լենինի և նրա ղեկավարած «Իսկրայի» շուրջը համախմբվեց մի կորիզ, որի օգնությամբ պրոլետարիատի առաջնորդը կարողացավ ստեղծել բոլշևիկյան կուսակցությունը։ Լենինյան գվարդիայի լավագույն ներկայացուցիչներ հանդիսացան Ի. Վ. Բաբուշկինը, Ն. Է. Բաումանը, Ս. Ի. Գուսևը, Ռ. Ս. Զեմլյաչկան, Մ. Ի. Կալինինը, Լ. Կեցխովելին, Գ. Մ. Կրժիժանովսկին, Պ. Ա. Կրասիկովը, Ն. Կ. Կրուպսկայան, Ֆ. Վ. Լենգնիկը, Ս. Մ. Լիտվինովը, Օ. Ա. Պյատնիցկին, Ի. Ի. Ռադչենկոն, Ե. Դ. Ստասովան և ուրիշներ. նրանց կողքին անհրաժեշտ է հիշատակել Լ. Բ. Կրասինին, Բ. Մ. Կնունյանցին, Ս. Գ. Շահումյանին, Ի. Խ. Լալայանցին, Ս. Ս. Սպանդարյանին, Ա. Ծուլուկիձևին, Մ. Ցխակայային և այլ լենինյանների, որոնք իրենց կարևոր մասնակցությունն ունեցան կուսակցության կազմակերպման բախտորոշ ու վճռական ժամանակաշրջանում։ Նրանց գործունեությունը օգնեց տեղական կազմակերպություններում ապահովելու «Իսկրայի» ազդեցությունը, կենսագործելու համագումար հրավիրելու լենինյան պլանը։ Այդ կազմակերպությունների մեջ իրենց ակտիվ գործունեությամբ աչքի էին ընկնում նաև Կովկասի

2 «Սովետական Հայաստան», 14 հուլիսի 1973, № 164։

3 Տե՛ս «Սովետական Հայաստան», 14 ապրիլի 1973։

4 Մ. Ա. Սուսլով, ՌՍԴԲԿ երկրորդ համագումարը և նրա համաշխարհային պատմական նշանակությունը, «Սովետական Հայաստան», 14 հուլիսի 1973։

սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները։ Ինչպես ընդգծում է Բ. Կնունյանցը Բաքվի կոմիտեի II համագումարում կարդացված զեկուցման մեջ, իսկրայական ազդեցությունը «մեզ մոտ տիրապետող էր սկզբունքային իմաստով։ «Ի՞նչ անել» գրքի երևան գալը մեզ մոտ չառաջացրեց ոչ մի պառակտում և տարաձայնություններ։ Կոմիտեն իր հիմնական սկզբունքներում համաձայն էր նրա հետ և ուժերը ներածի սահմաններում իրագործում էր առաջադրած ծրագիրը»[5]։

Սակայն քիչ չէին ուրիշ կարգի դժվարությունները բազմազգ Անդրկովկասում։ Նախ զորեղ էր բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների ազդեցությունը տեղական մանր բուրժուական խավերի և բանվորական որոշ շրջանների վրա։ Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները իրենց գործունեության հենց սկզբնական ժամանակաշրջանում ստիպված էին լայն պայքար ծավալել դաշնակցության և այլ ազգայնական կազմակերպությունների դեմ, որոնց համար, ինչպես նշում էր Բ. Կնունյանցը, «Կովկասը հանդիսանում է այն գլխավոր ասպարեզը, որտեղ այդ կազմակերպությունները քաղում էին իրենց մտավոր մարտական ուժերը, բանվորներից ու գյուղացիներից հավաքագրում էին երիտասարդություն՝ հեղափոխական խմբերի (հայդուկների) համար»[6]։ Աշխատավոր մասսաների նվաճման համար ծավալվում է պայքար ազգայնական կուսակցությունների և սոցիալ-դեմոկրատների միջև։

Մյուս կողմից, ի տարբերություն Ռուսաստանի պրոլետարական այլ կենտրոնների, Բաքվում, Բաթումում և այլուր բանվորների ազգային կազմը չափազանց խայտաբղետ էր և բազմատարր։ Օրինակ, Բաքվում կային 30 ազգությունների ներկայացուցիչներ, որոնցից մոտ 75%-ը տեղացիներ էին՝ ռուսներ, ադրբեջանցիներ, հայեր, օսեր, թաթարներ և այլն, իսկ մոտ 25%-ը՝ Պարսկաստանից եկած տարերթիկ բանվորներ, զուրկ ամեն մի կազմակերպությունից և պայքարելու ցանկությունից։ «Պարսիկ բանվորը,— գրում էր Բ. Կնունյանցը «Իսկրայում» 1903 թ.,— որ գալիս է մի երկրից, ուր ամենից ավելի իշխում է կամայականությունը, իրենից ներկայացնում է միանգամայն տգետ, բոլորովին ընկճված, մարդկային իրավունքների մասին բնավ հասկացողություն չունեցող մի էակ։ Այն ժամանակ երբ տեղացի բանվորները արդեն գլուխ են բարձրացնում տիրող կարգերի դեմ, պարսիկ բանվորն արգելակում է բանվորական շարժումը Բաքվում»[7]։

Ահա այսպիսի բարդ պայմաններում ստեղծվում, կոփվում և ամրապնդվում էին Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները։ Մի կողմից՝ գյուղացիության և առհասարակ մանր բուրժուազիայի բացարձակ մեծամասնություն, որ նպաստում էր որոշ կենտրոններում բուրժուական գաղափարախոսության ծաղկմանը, մյուս կողմից բազմազգ պրոլետարիատ և Բաքվի, Բաթումի, Թբիլիսիի, Խաշուրի, Ալահվերդու նման արագ աճող բանվորական կենտրոններ, որոնք սնում էին հեղափոխական գաղափարները, կոփում հեղափոխական գործիչներին ու կազմակերպություններին։ Դասակարգային և ազգամիջյան սուր ընդհարումների ասպարեզ հանդիսացող Կովկասը մի կարևոր փորձադաշտ էր, որտեղ շատ արագ հասունանում էին պրո-

---

5 «Второй съезд РСДРП. Протоколы», Москва, 1959, էջ 518—519։

6 Նույն տեղում, էջ 530։

7 Б. М. Кнунянц, Избранные произведения, Ереван, 1958, էջ 33—34։

լետարական գործիչները, մանավանդ նրանք, ովքեր արդեն անցել էին Ռուսաստանի խոշոր կենտրոնների հեղափոխական բովով։

Վերջիններիս թվին էին պատկանում նաև կուսակցության II համագումարի անդրկովկասյան երկու՝ Բաքվի և Բաթումի կոմիտեների պատգամավորներ Բ. Մ. Կնունյանցը և Ա. Գ. Զոհրաբյանը։ Առաջինը՝ Պետերբուրգում ուսանող եղած տարիներին (1896—1901) մտավ Լենինի ղեկավարած «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» մեջ և որպես Վայրաքաղաքի ուսանողության բյուրոյի ղեկավար գործիչ ծավալեց բուռն գործունեություն, որի համար և արտաքսվեց այնտեղից։ Երկրորդը՝ սկսելով հեղափոխական գործունեությունը 1892 թ. Խարկովի ուսանողական խմբակներում, 1896 թ. մտնում է նույն «Պայքարի միության» մեջ և երեք տարի հետո արդեն արտաքսվում է Թիֆլիս, որտեղ ամբողջովին նվիրվում է քաղաքական պայքարին։

Հիշելով իրենց գործունեության այդ շրջանը, Ա. Զոհրաբյանը գրել է. «Բոգդանը և ես աշխատում էինք Պետերբուրգի Ս. Դ-ական մանուկ կազմակերպության մեջ։ Սակայն այդ աշխատանքը դադարեց շնորհիվ ուսանողական շարժման, որի հետևանքը մեզ երկուսի համար այն էր, որ ստիպված էինք մի քանի տարով թողնել Պետերբուրգը և վերադառնալ Կովկաս»[8]։

Այստեղ նրանք Ստ. Շահումյանի, Մ. Խանոյանի, Աշ. Խումարյանի և ուրիշների հետ միասին ստեղծում են «Հայ-սոցիալ դեմոկրատների միությունը» և նրա օրգան «Պրոլետարիատ» թերթը, ղեկավար մասնակցություն են ունենում Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի կոմիտեների ՌՍԴԲԿ Կովկասյան միության կազմակերպման կարևոր գործում։ Թիֆլիսի կոմիտեի պատգամավոր Դ. Ա. Թոփորիձեն, ինչպես և նրա ընկերները ընտրվում են որպես իսկրայական մեծամասնության կողմնակից։ Սակայն նա տատանվում էր համագումարի բոլոր հիմնական հարցերի քննարկման ժամանակ, իսկ համագումարի վերջում անցնում է մենշևիկների կողմը, որի հետևանքով Կովկասյան միությունը 1903 թ. հոկտեմբերին նրան հեռացրեց կուսակցական ղեկավար աշխատանքից և հանձնեց կուսակցության դատի (որը տեղի չունեցավ)։ Իսկ Բաքվի և Բաթումի կոմիտեների ներկայացուցիչները իրենց չորս ձայնով (ամեն մեկը ուներ երկուական ձայն) կազմեցին համագումարի լենինյան 24 ձայների այն մեծամասնությունը, որի հաղթանակը ապահովեց բոլշևիկյան կուսակցության ձևավորումը համագումարում։ Խոսելով այդ խմբի մասին, Վ. Ի. Լենինը գրում էր, որ նրանք «պաշտպանում էին հետևողական իսկրայականությունը թե պարտիայի կենտրոնական հիմնարկների տակտիկայում և թե անձնական կազմում»[9]։

Համագումարը տեղի ունեցավ 1903 թ. հուլիսի 30-ից մինչև օգոստոսի 23-ը, սկզբում Բրյուսելում, ապա՝ Լոնդոնում։ Լարված պայքարը սկսվում է համագումարի հենց առաջին նիստում և շարունակվում մինչև վերջին՝ 37-րդ նիստը։ Վ. Ի. Լենինի կողմնակիցները նրա ղեկավարությամբ կարողացան լինել պահանջված բարձրության վրա։

Կովկասյան պատգամավորներից իր ակտիվությամբ աչքի ընկավ Բ. Կնունյանցը (ծածկանունները՝ Ռուբեն, Բակինեց, Ռուսով), որը համագումարի 21

8 «Տարազ», № 6, 1919, էջ 42։

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 7, էջ 6։

նիստում ելույթներ ունեցավ, բանաձևեր առաջարկեց, տեղեկանքներ տվեց ավելի քան 45 անգամ։ Արդեն երկրորդ («Բունդի տեղը ՌՍԴԲՊ-ում») հարցի քննարկման ժամանակ նա ունեցավ երեք ելույթ։ Վ. Ի. Լենինի դիրքորոշումը պաշտպանող համագումարի մեծամասնության հետ նա ևս դատապարտեց Բունդի կազմակերպական նացիոնալիզմը։

Վ. Ի. Լենինը համոզիչ կերպով հիմնավորեց, որ նացիոնալիզմը բանվոր դասակարգի ոխերիմ թշնամին է, որ շահագործման լիկվիդացումը ոչ թե ազգային, այլ սոցիալական խնդիր է։ Կանգնած լինելով մարքս-լենինյան այս տեսակետի վրա, Բ. Կնունյանցը ընդգծեց Բունդի անջատողական քաղաքականության վնասակարությունը ու համեմատելով այն Անդրկովկասյան կազմակերպությունների դրական աշխատանքի հետ, ասաց. «Ես հաճույքով եմ ընդգծում այն փաստը, որ մեզանում միանգամայն բացակայում է կազմակերպական սեպարատիզմը, որ վերջին ժամանակներս այնքան ուժեղ է արտահայտվում Բունդի մեջ։ Մեր քաղաքներից յուրաքանչյուրում գոյություն ունեն կուսակցական կոմիտեներ, որոնք գործում են մի քանի լեզուներով, մինչև այժմ միայն երեք (ռուսերեն, վրացերեն և հայերեն), իսկ եթե հարկ լինի նաև չորս լեզվով (նաև թաթարերեն-ադրբեջաներեն—Հ. Գ.), և չնայած դրան, մինչև այժմ դրանից ոչ մի անհարմարություն առաջ չի եկել և շարժման հզորությունը Կովկասում չի թուլացել։ Ըստ իս, ներկայումս Բունդում տիրապետող տենդենցը սոցիալիզմի հետ ոչ մի ընդհանուր բան չունի»[10]։ Սխալ համարելով կուսակցության I համագումարի որոշումը հատուկ հրեական կազմակերպության գոյության մասին, հռետորը հայտարարում էր, որ այն ոչնչով չի հիմնավորված՝ ո՛չ տերիտորիալ կամ լեզվային սկզբունքը կա այստեղ, ո՛չ էլ քաղաքական ինչ-որ հատուկ խնդիրներ։

Գտնելով, որ «կուսակցության յուրաքանչյուր անդամ հանդիսանում է ամբողջ Ռուսաստանի, ամբողջ պրոլետարիատի ներկայացուցիչը», Կնունյանցը հայտարարում էր, որ ինքը հաճույքով հրաժարվում է իրեն համարելու բազմազգ Կովկասի ժողովուրդների ներկայացուցիչ, որպեսզի իր վրա վերցնի «Ռուսաստանի պրոլետարիատի ներկայացուցչի շոյող անունը»[11]։

Միանգամայն ճիշտ դիրքերից էր ելնում այս հարցում նաև Ա. Զոհրաբյանը, որի կարծիքով «սոցիալ-դեմոկրատիան պետք է ձգտի բոլոր կազմակերպությունների միավորմանը և ձուլմանը»[12]։

Համագումարը մերժեց Բունդի պահանջը և սկզբունքորեն լուծեց այդ հարցը։ Այլևս կոմունիստական և բանվորական կուսակցությունների առաջ երբեք չծառացավ այն, թե արդյոք ազգային սկզբունքը կարո՞ղ է հիմք լինել կուսակցական կազմակերպություններ ստեղծելու համար։ Բոլշևիկները այդ խնդիրը լուծեցին պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով. նրանց օրինակին անխախտ կերպով հետևում են բոլոր եղբայրական կուսակցությունները։

Համագումարի ամենահիմնական, կարևորագույն հարցերից մեկը ծրագրի քննարկումը և ընդունումն էր։

Ինչպես հայտնի է, Վ. Ի. Լենինի և Գ. Վ. Պլեխանովի կազմած՝ «Իսկրայի» խմբագրության կողմից առաջարկված ծրագրի նախագիծը նախնական հա-

10 «Протоколы...», էջ 61։
11 Նույն տեղում։
12 Նույն տեղում, էջ 78։

վանության էր արժանացել սոցիալ-դեմոկրատական, այդ թվում նաև կովկասյան կոմիտեների մեծամասնության կողմից։ Սույնը տեղի ունեցավ նաև համագումարում, որտեղ ծրագրի դեմ քվեարկեց միայն Ակիմովը։ Այս առթիվ Ռուսովը (Կնունյանցը) հեգնանքով առաջարկեց «ընկ. Ակիմովի բոլոր ուղղումներից կազմել մի ծրագիր, քանի որ դրանք ըստ էության կազմում են «Իսկրայի» ծրագրից սկզբունքորեն տարբեր ծրագիր»[13]։

Սակայն ծրագրի մի շարք հիմնական հարցերում լենինյան դրույթների դեմ դուրս եկան և մյուս օպորտունիստները՝ բավական միահամուռ կերպով։ Այսպես, նրանք առարկեցին ծրագրում պրոլետարիատի դիկտատուրայի վերաբերյալ հատուկ կետ մտցնելուն, պատճառաբանելով, որ այն չկա արևմուտքի ավելի հին կուսակցությունների ծրագրերի մեջ։ Այս վերջինները, ինչպես հայտնի է, ելնում էին օպորտունիստական այն դրույթից, որ կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց աստիճանաբար բարելավվում է բանվոր դասակարգի վիճակը, իսկ այստեղից բխում էր արդեն էվոլյուցիոն զարգացման տեսությունը, դասակարգային պայքարի և հեղափոխության անհրաժեշտության բացասումը։ Քննադատելով օպորտունիստների այս տեսակետը, Լենինը ասում էր, որ «նրանք հասան մինչև աղքատացման տեսության «հերքումը» և մինչև պրոլետարիատի դիկտատուրայի վիճարկումը»[14]։ Պաշտպանելով Լենինին Ակիմովի, Մարտինովի, Լիբերի և մյուսների հարձակումներից, Պլեխանովը հայտարարեց, որ նրանց չի հաջողվի բաժանել իրեն և Լենինին, որ ինքը համաձայն է վերջինիս «Ի՞նչ անել» գրքում զարգացրած տեսակետների հետ։ Այնուհետև նա խիստ քննադատության է ենթարկում Ակիմովին, որը կարծում էր, թե «արդեն ժամանակակից հասարակարգում հնարավոր է ամբողջապես վերցրած պրոլետարիատի նյութական վիճակի բարելավումը և որ բանվոր դասակարգի գոյության նյութական պայմանների այդ աստիճանական բարելավումները կարող են հասցնել սոցիալիզմին»[15]։

Այս հայտարարությունները, ինչպես խնձորի երկու կես, նման են այսօրվա կապիտալիզմի ջատագովների փորձերին՝ հավատացնելու, որ մեր ժամանակներում ձևավորվում է «ժողովրդական կապիտալիզմը», որը իբր բարեկեցիկ վիճակ կստեղծի բոլոր դասակարգերի, ժողովրդական բոլոր խավերի համար, և հասարակության ներսում եղած հակասությունները աստիճանաբար կվերանան։

Հեղափոխական պայքարի փորձը ժխտում է նման տեսակետները։ Բանվոր դասակարգի առաջատար դերի մասին մարքս-լենինյան ուսմունքը եղել և մնում է կապիտալիզմի ու իմպերիալիզմի դեմ պայքարի հիմնական ելակետը։ Սրանից են բխում բոլշևիկյան կուսակցության ստրատեգիական և տակտիկական դրույթները, որոնցով այսօր էլ ղեկավարվում են բանվոր դասակարգի կուսակցությունները, անկախ նրա առանձին ջոկատների ընթացիկ վիճակից։

Ռուսաստանի համար չափազանց կարևոր էր ագրարային հարցը։ Կուսակցության ագրարային ծրագիրը մշակել էր Վ. Ի. Լենինը։ Համագումարում նրա քննադատությամբ հանդես եկան օպորտունիստները։ Մարտինովի և նրա

---

13 Նույն տեղում, էջ 175։

14 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 623։

15 «Протоколы...», էջ 130։

հետևորդների կարծիքով հողային հարցը պետք է լուծի բուրժուական հեղափոխությունը, իսկ սոցիալ-դեմոկրատների գործը չէ դրանով զբաղվելը։

Չհամաձայնելով հարցի նման դրվածքի հետ, Լենինը պնդում էր, որ սոցիալ-դեմոկրատիան պարտավոր է ավարտել այն, ինչ բուրժուազիան թերի է թողել։ Ճիշտ այդպես էլ ագրարային հարցը լուծելիս սոցիալ-դեմոկրատները պետք է վերադառնան «իրենց 1789, իրենց 1848 թվականներին։ Ռուսական սոցիալ-դեմոկրատները ճիշտ նույնպես չէին կարող չվերադառնալ նաև իրենց 1861 թվականին և վերադառնալ այնքան ավելի նռանդով ու այնքան ավելի հաճախ, որքան դեմոկրատական բարենորոգումների ավելի փոքր մասն է իրականացրել մեր գյուղացիական, թող թույլ տրվի ասել, «ռեֆորմը»[16]։ Հետևապես ճորտատիրության բոլոր մնացուկների դեմ պայքարը՝ գյուղացիների հողակտորները նրանց վերադարձնելուց մինչև կալվածատերերի, վանքերի և արքունական հողերի բռնագրավումը հօգուտ գյուղացիների, բոլոր այս պահանջները պետք է կազմեին ագրարային ծրագրի բովանդակությունը, որի իրագործումը կապված էր գյուղի դեմոկրատական վերափոխման, գյուղացիության լուսավորման, նրա՝ որպես պրոլետարիատի դաշնակցի, միապետության դեմ ուղղված համադեմոկրատական շարժմանը մասնակից դարձնելու հետ։

Այս մեծ աշխատանքը պետք է դրվեր գյուղացիական կոմիտեների վրա, ղեկավարելով նրանց գործունեությունը։

Լենինի բոլոր կողմնակիցները ակտիվորեն պաշտպանում էին նրա ծրագիրը, որն ընդունվեց ձայների մեծամասնությամբ։ «Կովկասյան պատգամավորներն այստեղ միանգամայն ճիշտ դիրք էին բռնել,— գրում է Լենինը,— զգալապես, հավանորեն, շնորհիվ այն բանի, որ ճորտատիրության բազմաթիվ մնացորդների տեղական ձևերի մերձավոր ծանոթությունը նախազգուշացնում է նրանց աբստրակտ-աշակերտական մերկ հակադրումներից, որոնք բավարարում էին մախովներին»[17]։

Բազմազգ Ռուսաստանում կենսական նշանակություն ուներ ազգային հարցը։ Լենինյան տեսակետը հանգում էր «պետության մեջ մտնող բոլոր ազգերի ինքնորոշման իրավունք» բանաձևին, որը հետագայում լրացվեց «ինքնորոշում մինչև պետականորեն անջատումը» ձևակերպումով։ Հարցի նման դրվածքը մի կողմից ուղղված էր բուրժուական նացիոնալիզմի, մյուս կողմից՝ «կուլտուրական ավտոնոմիայի» օպորտունիստական տեսակետների դեմ։

Բուրժուական նացիոնալիզմը, որ ծավալվում էր կապիտալիզմի զարգացման և ցարիզմի մեծապետական շովինիզմի քաղաքականության տարածման հետ, արդեն ազդում էր բանվորական որոշ շրջանների վրա և, ինչպես Բ. Կնունյանցն էր որակում, հանդիսանում էր ժողովուրդներին բաժանող և «դասակարգային պայքարի սրությունը մեղմացնող» զենք՝ տիրող դասակարգերի ձեռքին։ Ազգային հարցը քննարկելիս Ա. Ջոհրաբյանը զայրույթով դատապարտեց այն բռնությունները, որոնք կիրառվում էին հայկական դպրոցները փակելիս[18]։

Բ. Կնունյանցը՝ Կովկասում ազգային հարցով ընդհուպ զբաղվող առաջին մարքսիստներից մեկը, բազմակողմանի մասնակցություն ունեցավ այս հար-

---

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 629։
17 Նույն տեղում, հատ. 7, էջ 295։
18 «Протоколы...», էջ 256։

ցի քննարկմանը։ Պաշտպանելով մարզային ինքնավարության գաղափարը, նա իր դիրքը հիմնավորեց այսպես. «Կենցաղային պայմանների և ազգաբնակության կազմի բազմազանությունը մեր ծայրամասերի համար ստեղծում են այնպիսի իրադրություն, որ անհրաժեշտ են այդ պայմաններին համապատասխան տեղական հիմնարկություններ... Այդ պահանջը կլինի նաև պատասխան այն նացիոնալիստներին, որոնք կարծում են, թե ծայրամասերի հարցի լուծումը կարող է լինել միայն քաղաքական առանձնացման մեջ»[19]։ Այս վերջինը չէր համապատասխանում պրոլետարիատի շահերին, դանդաղեցնում էր դասակարգային պայքարը։ Իրականում, ազգերի ազատ զարգացման պահանջները չէին բավարարվի առանց ինքնավարության։ Կուսակցությունը համարձակ կանգնում է այս դիրքավորման վրա։

Հանգամանալից քննարկումից, ծրագրային հանձնաժողովի խմբագրական որոշ փոփոխումներից հետո ՌՍԴԲԿ մարքսիստական ծրագիրը ընդունվեց համագումարի կողմից։

Կանգ չառնելով որոշ հարցերի քննարկման ընթացքի վրա, նշենք համագումարում սկզբունքային պայքար առաջ բերած երկու հիմնական կետերի շուրջը ծավալված վիճաբանությունները և կովկասյան պատգամավորների դիրքը։ Դրանցից մեկը կուսակցության կանոնադրության քննարկումն էր, որին նվիրվեց վեց նիստ։ Նախագծի 13 կետերից միայն առաջինը չափազանց սուր բախումների առարկա հանդիսացավ։ Քննարկման ենթարկվեցին Լենինի և Մարտովի հայտնի ձևակերպումները կուսակցության անդամի և նրա պարտականությունների մասին։ Կազմակերպական երկու տարբեր սկզբունքների քննարկումը և մեկի կամ մյուսի ընդունումը ունենալու էին որոշիչ նշանակություն կուսակցության քաղաքական գծի, նրա ապագա գործունեության համար։

Պատգամավորներից շատերը առանց լավ հասկանալու պաշտպանեցին Մարտովի տեսակետը։ Նրանց թվին էր պատկանում նաև Ռուսովը։ Կնունյանցը գտնում էր, որ կուսակցության առաջադրանքով աշխատող յուրաքանչյուր բանվոր կարող է նրա անդամը լինել։ Նրա կարծիքով կցումը բավական էր, որպեսզի ամեն մի կցված անձնավորություն գտնվի կուսակցության շարքերում։ Սակայն միանգամայն պարզ է, որ կուսակցությունը՝ որպես դասակարգի առաջավոր, զենկավար մասը, կարող է իր ետևից տանել բանվոր դասակարգի մեծ կամ փոքր մասին, սակայն պարտադիր չէ, որ բոլորը համարվեն կուսակցության անդամներ։ Ընդհատակի պայմաններում այս բանը կարող էր մեծ վնաս հասցնել կուսակցությանը և ընդհանրապես զրկել նրան դասակարգի առաջավոր ջոկատը լինելուց։

Նման սխալ տեսակետի վրա էին կանգնած ղգալի թվով պատգամավորներ։

Վ. Ի. Լենինի կարծիքով այդ սխալը խիստ բնորոշ է «շատ պատգամավորների վերաբերմունքի տեսակետից, որոնց համար հեշտ չէր գլուխ հանել իրոք նոր, բավականին բարդ և դետալ հարցից»[20]։ Ինքը Բ. Կնունյանցը անալիզի ենթարկելով վերոհիշյալ հարցի շուրջը եղած տարաձայնությունները, համագումարի արդյունքների մասին Բաքվի կոմիտեին գրած նամակում նը-

---

19 Նույն տեղում, էջ 183։

20 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 7, էջ 321։

շում է. «Կարծիքները, բավականին երփներանգ և պատահական կերպով խմբավորվեցին կազմակերպության երկու տարբեր սիստեմների ներկայացուցիչների՝ Լենինի և Մարտովի շուրջը...»[21]։

Քվեարկության արդյունքը եղավ 28 կողմ և 22 դեմ. ժամանակավորապես հաղթեց Մարտովի տեսակետը։ Վ. Ի. Լենինը հիշյալ քվեարկության արդյունքներին տվել է հետևյալ գնահատականը. «Այստեղ ևս կան առանձին ձայներ, որոնք խախտում են պատկերի լիակատար ներդաշնակությունը,— մի այնպիսի մեծ ժողովում, ինչպես մեր համագումարն է, անխուսափելիորեն մի մասը կազմում են «վայրենիները», որոնք պատահաբար մերթ այս կողմն են ընկնում, մերթ մյուս կողմը, մանավանդ մի այնպիսի հարցում, ինչպես առաջին կետը, որտեղ տարամտության իսկական բնույթը դեռևս ուրվագծվում էր միայն և շատերն ուղղակի ժամանակ չէին ունենում հասկանալու (հարցը գրականության մեջ նախապես քննված չլինելու պատճառով)»[22]։

Վեճերը կանոնադրության մյուս կետերի վերաբերյալ վերջանում են լենինյանների հաղթանակով։ Ամբողջ կանոնադրությունը ընդունվում է բացարձակ մեծամասնությամբ։ «Ի տարբերություն II ինտերնացիոնալի կուսակցությունների կազմակերպական հայացքների,— ասում է Մ. Ա. Սուսլովը,— լենինյան կանոնադրությունը ամենայն պարզությամբ սահմանում էր կուսակցության դասակարգային բնույթը, երաշխավորում նրա սոցիալական կազմի պրոլետարական կայունությունը և ապահովում կազմակերպական, հաստատուն հիմունքները»[23]։ Պարզ ըմբռնելով այս հանգամանքը, Ռուսովը (Կնունյանցը) և Լենինի մյուս կողմնակիցները կանգնեցին ամուր իսկրայականների դիրքերի վրա։ Այդ ավելի ևս ակնառու դարձավ համագումարի վերջին նիստերում։ Տեղական կազմակերպությունների իրավունքների հարցը քննարկելիս պաշտպանական ճառով հանդես է գալիս Բ. Կնունյանցը։ «Այն ռայոնների շարքում,— ասում է նա,— որտեղ ռուսաստանյան կուսակցությունը աշխատանք է տանում,— Կովկասը գտնվում է այն աստիճան բացառիկ պայմաններում, որ ռայոնական կազմակերպության հիմնումը անհրաժեշտություն էր... Այդպիսի կազմակերպության օրինակ կարող է լինել այնտեղ գոյություն ունեցող կոմիտեների միությունը»[24]։ Օպորտունիստները հանդես են գալիս մի հայտարարությամբ, որ նման Միության ստեղծմամբ կազմակերպվում է մի նոր «բունդիկ»։

Կնունյանցը, տվյալ հարցի կապակցությամբ, իր չորրորդ ելույթում բացատրեց, որ կովկասյան միութենական կոմիտեն բունդի նման ազգային կազմակերպություն չէ, այլ տեղական ինտերնացիոնալ կազմակերպություն, որ նրա գոյության անհրաժեշտությունը կապված է տեղական լեզուներով քաղաքական աշխատանք տանելու անհրաժեշտության հետ։ Երկար պայքարից հետո ընդունվեց Կովկասի պատգամավորների մասնակցությամբ Լենինի կրած բանաձևը։ Այսպիսով օրինականացվեց Կովկասյան միության գոյությունը։ Լենինի առաջարկով, որի պաշտպանությամբ հանդես եկան Բ. Կնունյանցը, Ա. Զոհրաբյանը և ուրիշներ, «Պրոլետարիատի կռիվը» թերթը (ռուսերեն, վրացերեն, հայերեն) հաստատվեց որպես միութենական կոմիտեի օրգան։

21 Б. М. Кнунянц, Նշվ. աշխ., էջ 58։
22 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 7, էջ 349։
23 «Սովետական Հայաստան», 14 հուլիսի 1973։
24 «Протоколы...», էջ 330։

Ջափազանց լարված դրություն ստեղծվեց համագումարում կուսակցության կենտրոնական օրգանների ընտրության ժամանակ։

Կենսունակ և Ռուսաստանի շարժման հետ կապված կենտրոններ ստեղծելով պետք է ավարտվեր երեք շաբաթ տևած պայքարը, և պայքարի արդյունքները շատ վճռական նշանակություն պետք է ունենային կուսակցության համար։ Որպեսզի այս կարևոր հարցի լուծումը ընթանար կազմակերպված, Լենինը իսկրայականների մասնավոր խորհրդակցության ժամանակ առաջարկում է «Իսկրայի» խմբագրության և կենտրոնական կոմիտեի կազմում ընտրել երեքական մարդ, ավելի օպերատիվ և գործնական կենտրոններ ունենալու նպատակով։ Առաջարկը ընդունվում է։ Լենինի առաջարկությունը՝ երկու եռյակ ընտրելու վերաբերյալ, համագումարին ներկայացրեց Ռուսովը (Կնունյանցը)։ «Համագումարում մեր հսկայական ամբողջ աշխատանքը,— ասաց նա,— մշակած ծրագիրն ու կանոնադրությունը ոչնչի կհանգեին, եթե մենք չընտրեինք գործունակ կոլեգիաներ»[25]։

Առաջարկի շուրջը եղան փոթորկալից վեճեր։ Մարտովի կողմնակիցները աշխատեցին պահպանել «Իսկրայի» հին կոլեգիան, դեմ դուրս եկան եռյակների ընտրությանը։ Բազմաթիվ ելույթներից ամենից ցայտունը Ռուսով-Կնունյանցի հայտնի ճառն էր, որտեղ նա պաշտպանում էր լենինյան գիծը, օպորտունիստների դիրքը անվանում էր քաղքենիական և հայտարարում. «Եթե մենք այստեղ հավաքվել ենք ոչ թե փոխադարձաբար հաճոյական ճառեր ասելու, ոչ թե քաղքենիական քնքշությունների, այլ կուսակցություն ստեղծելու համար, ապա մենք ոչ մի կերպ չենք կարող համաձայնվել այդ տեսակետի հետ։ Մենք կանգնած ենք պաշտոնական անձնավորությունների ընտրության հարցի առջև, և այստեղ խոսք չի կարող լինել այս կամ այն չընտրված ընկերոջ հանդեպ անվստահություն ցուցաբերելու մասին, այլ միայն գործի օգտի մասին, և այն մասին, թե ընտրվող անձը համապատասխանո՞ւմ է այն պաշտոնին, որի համար ընտրվում է»[26]։

Այս ճառը հանդիսացավ իսկական մեղադրական՝ ուղղված մարտովականների, նրանց կազմակերպական օպորտունիզմի դեմ, որ պարտիային տարավ դեպի պառակտում։

Հետագայում Վ. Ի. Լենինը խորհուրդ էր տալիս. ով ցանկանում է ինքնուրույն կերպով «վերլուծել կուսակցական պառակտման պատճառները և գրտնել նրա արմատները համագումարում, կարդալ և վերստին կարդալ ընկ. Ռուսովի ճառը»[27]։

Երկար և սուր վիճաբանությունները, բազմաթիվ քվեարկությունները վերջանում են Լենինի կողմնակիցների հաղթանակով։ Ամուր իսկրայականների ձայների մեծամասնությունը ապահովում է մեծամասնականների հաղթանակը։ Այսպես սկիզբ է առնում բոլշևիկյան կուսակցությունը։

Բ. Կնունյանցի ծառայության ճանաչումը կարելի է համարել հետևյալ փաստը. Լենինը հիշատակում է, որ համագումարի մեծամասնականների մասնավոր զրույցների ժամանակ կենտրոնական կոմիտեի անդամության համար առաջադրվել էր նաև Ռուսովի թեկնածությունը[28]։

---

25 Նույն տեղում, էջ 357—358։

26 Նույն տեղում, էջ 364։

27 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 7, էջ 399—400։

28 Նույն տեղում, էջ 540։

Չնայած բացասական առանձին մոմենտների, II համագումարը կատարեց իր հիմնական խնդիրը՝ պրոլետարիատի միասնական, հեղափոխական կուսակցությունը ստեղծելու խնդիրը։ Վ. Ի. Լենինի և նրա հետևորդների շնորհիվ հաղթանակեցին իսկրայական ծրագիրն ու ուղղությունը, իսկրայական կազմակերպական պլանները։ Հիմնադրվեց նոր տիպի, մարքսիստական, բոլշևիկյան կուսակցությունը, պրոլետարական դիկտատուրայի և սոցիալիստական ու կոմունիստական շինարարության միակ ղեկավար ուժը։ Ինչպես նշում է Մ. Ա. Սուսլովը՝ «Կուսակցության մասին լենինյան ուսմունքը ՍՄԿԿ-ի և ամբողջ միջազգային կոմունիստական շարժման գաղափարական հուժկու զենքն է։ Հենց դրանումն են այն ուժի ու ամրության ակունքները, որոնք մեր կուսակցությանը հնարավորություն ընձեռեցին, հաջողությամբ հաղթահարելով իր ճանապարհին կանգնած ծանրագույն փորձությունները և հսկայական դժվարությունները, նվաճելու համաշխարհային պատմական հաղթանակներ»[29]։

ՍՄԿԿ անցած պանծալի ուղին ու պայքարի հարուստ փորձը ունեն միջազգային խոշոր նշանակություն։ Բոլշևիկների կուսակցության լայն ինտերնացիոնալ գործունեությունը ազգային և ինտերնացիոնալ խնդիրների զուգորդման փայլուն օրինակ է։

Դեռևս առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ ու նրա զինակիցների ակտիվ մասնակցությամբ ստեղծվեցին միջազգային ինտերնացիոնալիստական մի շարք կենտրոններ և օրգաններ, որոնց շուրջը համախմբվեցին պրոլետարիատի լավագույն գործիչները։ Այս բազայի վրա այնուհետև ձևավորվեցին տարբեր երկրների կոմունիստական կուսակցությունները, որոնց գաղափարախոսությունը կռեց ու կոփեց Վ. Ի. Լենինի գլխավորած կոմունիստական ինտերնացիոնալը։

«Բոլշևիզմը,— նշում է Վ. Ի. Լենինը,— ՍՏԵՂԾԵՑ III ինտերնացիոնալի գաղափարական ու տակտիկական հիմքերը... Բոլշևիզմը պիտանի է որպես տակտիկայի տիպար բոլորի համար»[30]։ Այնուհետև աճեցին ու ամրապնդվեցին բանվորական ու կոմունիստական կուսակցությունները, նրանք համախմբվեցին և դարձան միջազգային ազդեցիկ գործոն։ Միայն մաոյականներն ու նրանց մի քանի կամակատարները հեռացան մարքսիզմ-լենինիզմի դիրքերից, դարձան միջազգային բանվորական և ազգային-ազատագրական շարժումները պառակտող մի ուժ, որի փորձերը սակայն դատապարտված են ձախողման։

ՍՄԿԿ քաղաքականության հաղթանակի ակնառու ցուցանիշներից է սոցիալիզմի միջազգային սիստեմի ստեղծումը, սոցիալիստական համագործակցության երկրների ժողովուրդների եղբայրական դաշինքը։

Միջազգային կյանքի ներկայիս իրադարձությունները համոզիչ կերպով վկայում են, որ ՍՄԿԿ լենինյան արտաքին քաղաքականությունը դառնում է միջազգային դրության մշտապես հզորացող և արդյունավետ գործոնը։

Կուսակցության II համագումարի ուղենշած, մարքսիզմ-լենինիզմի գաղափարներով զինված Ռուսաստանի բանվոր դասակարգը, Սովետական Միության ժողովուրդները ցույց տվեցին այն ճանապարհները, որով ընթանում և ընթանալու է զարգացող մարդկությունը։ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն ՌՍԴԲԿ II համագումարի 70-ամյակի մասին իր որոշման մեջ հետևյալ կերպ

29 «Սովետական Հայաստան». 14 հուլիսի, 1973։

30 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 371—372։

է ամփոփում այդ համագումարում ստեղծված լենինյան կուսակցության անցած փառապանծ ուղու նշանակությունը. կուսակցության հսկայական փորձը՝ «լենինիզմի հիմունքների կենսագործման, հեղափոխական պայքարի ղեկավարման, սոցիալիզմի ու կոմունիզմի շինարարության ուղղությամբ, պատմական ամեն մի շրջանի պահանջներին համապատասխան իր իսկ կուսակցության զարգացման մեծ փորձը, դարձավ ամբողջ միջազգային հեղափոխական շարժման սեփականությունը»[31]:

Այսպիսով, բոլշևիկյան կուսակցության կազմակերպումը ՌՍԴԲԿ II համագումարում ոչ միայն շրջադարձային երևույթ հանդիսացավ Ռուսաստանի և նրա բոլոր ժողովուրդների, առաջին հերթին բանվոր դասակարգի ներկայի ու ապագայի համար, այլև միջազգային բանվորական շարժման մեջ սկիզբ դրեց իսկական հեղափոխական, մարքսիստական կուսակցության, ապահովեց նրա ղեկավար դերը և դրանով իսկ մեծապես նպաստեց տարբեր երկրներում բանվորական ու կոմունիստական, ինչպես նաև ազգային-ազատագրական շարժումների ծավալմանը ու նրանց հաղթանակին, և, վերջին հաշվով, սոցիալիզմի, դեմոկրատիայի ու խաղաղության վեհ նպատակների իրագործմանը ամբողջ աշխարհում:

---

31 Նույն տեղում, 14 ապրիլի, 1973: